

Հ. ԱՆՈՒՈՂՅԱՆ

Հայկական ՍՍՌ ԳԱ-ի իսկական անդամ

ՀԱՅԿԱԿԱՆ Ք

Ը.

55. ՀԱՅ ԹՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՍԽԱԼ ՉԵՎ

Ամենքիս հայտնի է հին հայոց թվագրության ձևը. Ա—Ժ ներկայացնում են 1—10 թվերը, Ժ—Ճ ներկայացնում են 10—100, իսկ Ճ—Ռ՝ 100-ից մինչև հազար թվերը: Այս վերջին շարքի անհատ թվերն են Ճ=100, Մ=200, Յ=300, Ն=400, Շ=500, Ո=600, Չ=700, Պ=800, Ջ=900:

Ուշ շրջանի գրողների մեջ, թվագրության ժամանակ պատահում են երբեմն շեղումներ այս վերջի թվերի շարքում, օրինակ՝ փոխանակ գրելու Շ=500, կարելի է գտնել ԵՃ (5×100) և նման ձևեր:

Ավելի հետաքրքիր են այն շեղումները, որոնց մեջ հարյուրավոր թիվը դրվելուց հետո ավելացվում է նաև Ճ հարյուրավոր թիվը՝ բոլորովին ավելորդ և իզուր տեղը:

Այսպիսի մի թվագրություն տեսա վերջերս Սիւրմէեանի «Ցուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի, հտ. Ա» աշխատության մեջ (տպ. Երուսաղեմ 1935), էջ 214:

Ահա ձեռագրի հիշատակարանի այդ կտորը «Գրեցաւ... ի մեծանշակ քաղաքս որ է Բերիայ որ կոչի Հալպ ընդ հովանեաւ Սր. ածածնին, ի թուականութեն. Հայոց: ՉՃՀԸ. ի նեղ և ի դառն ժամանակիս»:

Հրատարակիչ Սիւրմէեանը այս ՉՃՀԸ թարգմանել է 1429 թ. անշուշտ մտածելով, թե $2=700 + \text{Ճ}=100 + \text{ՀԸ}=78$, գումար 878, որի վրա ավելացնելով 551, ստացվում է 1429: Եվ այս 1429 թիվը դրել է էջ 213 նկարագրված № 126 ժողովածուի վերևում:

Բոլորովին սխալ է:

Պետք է ամբողջապես դեն գցել Ճ=100 թվանշանը և փնայալը գումարելով՝ ընդունել 1329 թ.:

Սխալը կարելի է հաստատել մի քանի ձևով:

Ժողովածուի գրիչն է Ստեփաննոս քահանա Կրակացի: Այս անձը ծանոթ է մեզ այլուստ. նա հիշված է Ալիշանի Սիսվանում, էջ 517ա և 547ր: Նախ քահանա էր, ապա եղավ արքեպիսկոպոս Տարսուսի. թվականն է 1320 թ. (այս թվին նա ուսուցիչ էր Կրակա գյուղաքաղաքի դասատան մեջ, որ գտնվում էր Թորոս Չաւտկա հովանավորության տակ):

Երկրորդ. ձեռագիրը էջ 351 ՉՃՀԸ թվականը դնելուց հետո, ավելի մանրամասնում է ժամանակը ասելով. «ի հայրապետութե. տն. Յակորայ»:

Եվ ի թագավորութեն. տղայ Լևոնի Որդի աւշին թագավորի. Այս Յակոբն է Յակոբ Բ Տարսոնացի, որ գահակալել է 1327—1341 թ. (Իսկ 1429 թվին կաթողիկոս է Պողոս Բ Գառնեցի):—«Տղայ Լևոնն» է Լևոն Ե, որդի և հաջորդ Օշինի, տասը տարեկան հասակում գահ բարձրացավ և 1329 թվին 19 տարեկան էր միայն: (Իսկ 1429 թվին հայոց թագավոր չկար. Լևոն Զ գերի էր գնացել 1375 թվին):

Երրորդ. ձեռագիրը էջ 226 դրված հիշատակարանում արդեն չի գրում ՉՃՀԸ, այլ միայն ՉՀԸ, որից չուշարեւելով Սիւրմէեանը, թարգմանում է 1329 թ. և կողքին էլ գնում է ! զարմացական նշանը:

Չորրորդ. ձեռագիրը էջ 284 գնում է նորից մի հիշատակարան, ուր կրկնելով ՉՃՀԸ թվականը, Յակոբ և Գրիգոր Անարզարացի (1293—1307 թթ.) կաթողիկոսների և Օշին ու Լևոն (Ե) թագավորների անունները, տալիս է մի քանի պատմական նոր մանրամասնություններ: Այս նոր հիշատակություններից էլ չի ուշարեւելում Սիւրմէեանը և ասում է թե «անկասկած որ յիշատակագրութեան վերջին մասը նոյնութեամբ ընդօրինակուած է հատորիս գաղափար ծառայող առաջին օրինակէն, այլապէս գրչութեան թուականը և յիշատակագրութեանս այդ մասը ժամանակով չեն նոյնանար»:

56. ՀԱՅԵՐԵՆԻ ՄԱՏՈՒՅԱԾ ՆՊԱՍՏԸ ՊԱՐՍԿԵՐԵՆԻՆ

Ամեն մի իրանագետ, որ առիթ է ունեցել քիչ թե շատ զրադվելու հայերենով, գիտել է այն մեծ բառապաշարը, որ հայերենը փոխ է առել իրանական լեզվից զանազան շրջաններում, հին պարսկերեն, պահլավերեն և պարսկերեն. Ըստ իմ հաշվի, այս բոլորից փոխառյալ բառերի թիվը 1405 է (տես իմ Հայոց լեզվի պատմ. Երևան, 1940, Ա հտ. էջ 240—292), ուր դրված է նաև այդ բոլոր բառերի ցանկը (գուրս են գցված նոր պարսկերենից եղած փոխառությունները, որոնք գտնվում են արդի ժողովրդական բարբառներում):

Հարուստ չէ իրանական հին գրականությունը և հետևաբար հարուստ չէ նաև իրանական բառամթերքը՝ չին պարսկերենի ամբողջ բառամթերքը բաղկացած է 400 բառից, զենդերենը 4000 բառից. պահլավերենի բառարանը բնականաբար ավելի հարուստ է: Թեհրանի համալսարանի նախկին դասախոս պրոֆ. Ռուբեն Արրահամյանը կազմել է պահլավերենի լիակատար բառարանը, բաղկացած 10.000 բառից, պահլավերենից պարսկերեն և անգլերեն:

Հայերենը մեծ ծառայություն է մատուցանում պահլավերենի ուսումնասիրության համար հենց իր այդ փոխառյալ բառերով: Այդ ծառայությունը մենք կարող ենք ամփոփել հետևյալ կետերի մեջ:

1) Հաճախ հայտնի չէ պահլավերեն բառի ընթերցումը՝ այդ լեզվի շատ պակասավոր այբուբենի պատճառով, ուր ձայնավորները չեն գրվում, տառերի միացումները խառնակում են բառի պատկերը, տառերը իրար նման են և ունեն զանազան արժեքներ: Հայերեն փոխառյալ ձևը՝ պահլավով բառի հարազատ պատկերը, ցույց է տալիս պահլավերեն բառի ստույգ ընթերցումը: Օրինակ՝ Արտավիրաֆի մեջ (Artaviraf) 1, 42, 40 կարգում էին nahīčak (կամ naičak) ramitunīt ցվիճակ գցել: Այս բառի առաջին տառը պհլ. կարգացվում է թե ու և թե v. կապում էին բառը պրս. nay «եղեգ» բառի հետ՝ ենթադրելով թե վիճակը գցում էին եղեգի կտորտանքներով:

Տողերս գրողը, երբ ուսանող էր Փարիզում, ի նկատի ունենալով հյ. վիճակ բառը և վիճակ արկանել ոճը, որ ճիշտ ու ճիշտ համապատասխանում է պհլ. ոճին, մտածեց թե այդ բառը պետք է կարդալ ոչ թե nahīčak կամ naičak, այլ večak, ըստ որում հայ. վիճակ vičak բառի հին ձևն է *վէճակ večak. իմ այս միտքը ես հայտնեցի իսկույն Մեյեյին, որ տվեց իր հավանությունը իմ ընթերցման ճշտություն մասին: Երբ ես պատրաստվում էի գրել այդ մասին մի հոդված, հրատարակվեց Fr. Müller-ի հոդվածը նույնի մասին WZKM 10, 175, ուր հեղինակը բոլորովին անկախ հասել էր նույն եզրակացության: Hübschmann-ը իր Arm. Gram. աշխատության մեջ 1, 247 ընդունեց այդ մեկնությունը և այժմ չեմ կարծում, թե գտնվի մի պահլավագետ, որ այդ բառը շարունակի կարդալ nahīčak կամ naičak.

Nyberg, իր Hilfsbuch des Pehlevi (Uppsala 1931) աշխատության մեջ II, 173 ունի պհլ. մի բառ, որ ենթադրաբար կարդում է pašn և թարգմանում է „etwa Vertrag, Vereinbarung“: Կապելով այս բառը հյ. դաշն և վրաց dašni բառերի հետ, ես այդ պհլ. բառը առաջարկեցի ուղղել dašn. (իմ այս առաջարկը տպված է Մառի անվան նվիրված ժողովածուի մեջ, 1933 թ.).

2) Երբեմն պահլավերեն բառի նշանակությունը կամ բոլորովին ճշտված չէ և կամ մոտավորապես միայն հայտնի է. հայերենը գալիս է այս դեպքում որոշելու կամ հաստատելու ճիշտ նշանակությունը, ինչպես վերի dašn բառի օրինակը ցույց տվեց:

3) Հայերենը օգնում է երևան հանելու երբեմն պահլավերենի բարբառային ձևերը և ճշտելու նրանց գալաոը և ժամանակը: Օրինակ՝ «պողպատ» նշանակող բառը հայերենում ունի երկու ձև՝ պողովատ և պողոպատ. պահլավերենում չկան այս բառերը և կա միայն ածականը, որ կարդացվում է polapaten կամ polafaten «պողպատյա». հայերենը երևան է հանում երկու պհլ. ձև *polavat և *polapat, նույնիսկ պողովատիկ <պհլ. *polavatik, որոնք ներկայացնում են երկու տարբեր պահլավական բարբառներ: Ավելի ուշ պիտի առաջանա պրս. پلاذ polad, որ փոխ պիտի առնեն զանազան հաբեան լեզուներ:

4) Շատ բառեր կան, որ չեն ավանդված պահլավական գրականությունում (պարսիկները երբ ընդունեցին Իսլամը, ոչնչացրին իրենց կրակապաշտական շրջանի «պիղծ» գրքերը): Այդ բառերի մի մասը պահված է իրանական ուրիշ լեզուներում. բայց հայերենը գալիս է շատ հարազատ կերպով հաստատելու ոչ միայն այն, որ այդ բառերը կային նաև պահլավերենում, այլև երևան է հանում նաև նրանց ճիշտ ձևը. Օրինակ՝ պաշար pašar հայերեն բառը, որ նշանակում է «պահեստի կամ ճանապարհի ուտելիքներ», անշուշտ պահլավերեն է: Այդպիսի բառ չկա պահլավերենում, բայց որովհետև սոգդիերենում կա pš'' βr «vivres» (BSL 23, 107) և հայերենը բառեր չէ վերցրած սոգդիերենից, ուստի պետք է առանց այլևայլի ենթադրել պհլ. *pašar բառը այս նշանակությամբ (իմ այս մեկնությունը տե՛ս Revue des etudes arm. III, 8):

Հյ. նուիրակ կոչվում է պալատական հատուկ այն պաշտոնյան, որ արքունիք կանչված անձերին առաջնորդում էր թագավորի առաջ. կամ թագավորի կամ իշխանի առաջից գնալով՝ նրա գալուստն էր հայտարար-

բում և ժողովրդի մեջ ճանապարհ րաց անում: Այս բառը պահլավերեն է և ենթադրում է պհլ. nived'ak ձևը (հմտ. զնդ. nivaeð'ayemi «ծանուցանեմ» և պրս. 𐭥𐭮𐭱𐭮 nūvid «ավետիք, լուր»):

Բոլորն էլ կազմված են ni մասնիկով vid=զնդ. vaed «գիտենալ, ճանաչել, հասկանալ» արմատից: Չէ ավանդված պհլ. *nivēðak բառը. հայերենն է միայն, որ երևան է հանում այդ բառը և միանգամայն այդ պաշտոնն ու պաշտոնյան:

5) Դեպքեր կան, երբ հայերեն բառը ինքը մենակ ենթադրել է տալիս պահլավերեն մի բառ, որ ոչ մի իրանական լեզվի մեջ չէ պահված: Վերջերս հաջողվեց ինձ երևան հանելու երկու այդպիսի բառ: Առաջինն է հյ. օպիրի. այս բառը չունի հայերենում ոչ մի մեկնություն. որովհետև Ժ հնչյունը պարունակող բառերը ընդհանրապես իրանական են, ես այդ բառը վերածեցի պահլավական ձևին: Հայերենի բն ձայնախումբը ծագում է իրանական Թ ձայնախմբից. օր. աշխարհ<հպրս. Xšaθra, զոհ<զնդ. Zaoθra, Ժահր>զնդ. jaθra, շնորհ<զնդ. xšnaoθra, պահ, պարհ<զնդ. pāθra, սեպուհ, սեպուհր<զնդ. viso-puθra, Մսնահիհր<իրան. Mana-čiθra, Միհր<հպրս. Miθra ևն, Լստ այսմ ես կազմեցի *zipiθra ձևը, որ իսկույն հիշեցրեց զնդ. *aži-piθra Շնա, որի հայրը օձ է, օձահայր» և այս ձևը ենթադրել տվեց պհլ. žipihr անծանոթ բառը: (Տես Տեղեկ. Ակադ. 1945, № 1—2, էջ 6): Այս միևնույն բառը առաջնորդեց ինձ բացատրելու երկրորդ բառը դժպի, հին ձևը դժպիրհ Վանհաճո, ծանր, խիստ, դժնդակ», որ տվեց իրան. *duž—piθra>պհլ.=*dužpihr Շնա, որի հայրը չար է, չարահայր»:

6) Հայերենը օգնում է նաև երևան հանելու պահլավերեն բառերի մի նոր անհայտ նշանակությունը. օր. հյ. ոստիկան նշանակում է ժողովական, զավառապետ. և ոչ մի ուրիշ նշանակություն չունի. նա ծագում է անշուշտ պհլ. ostikan բառից, որ նշանակում է միայն «հավատարիմ» և ուրիշ ոչ մի նշանակություն չունի: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայերենում հավատարիմ բառը ունի նաև թթազավորին մոտիկ բարձրագույն պաշտոնյա իմաստը, ուստի ենթադրում եմ, որ պահլավերենում էլ ostikan «հավատարիմ» բառը նշանակում էր նաև ժավառապետ, որ փոխ առան հայերը (այս վերջին իմաստով):

7) Էլ ավելի բազմաթիվ և հետաքրքրական են այն հայերեն բառերը, որոնց մեջ ոչ մի իրանական արմատ չի երևում, բայց բուն իսկական հայականջը զգում է ինչ որ անսովոր բան հայերենի զգացողությամբ և ասում է, որ սա պահլավերեն պիտի լինի: Այսպիսի բառերից են «ամբաստանել», «աշտարակ», «աշտանակ» և այլն, որոնք ենթադրում են պհլ. *ambastan, *štarak, *štanak կամ սրանցից քիչ տարբեր ձևով բառեր: Այսպիսի բառերի թիվը հասնում է հարյուրների:

Նկատի ունենալով այս բոլոր հանգամանքները, անհրաժեշտ է ուրեմն ամեն մի իրանագիտի համար հայերենի ուսումը՝ բացատրելու և մանավանդ վերականգնելու համար պահլավերենի կորած բառամթերքը:

57. Ի ՄՄԲԱԿ ԷՆ ՎԱՐԵԼՈՅ

Եզնիկ Գողրացին (Տպ. Վենետիկ, էջ 174) անասունների բնագդի մասին խոսելով՝ ասում է. «Ծորս ևն և ազգմունք ինչ բնականք, որովք հան-

դերձելոց իրիժ իրաց ազդ լինիցի նոցա. որպէս ձիոյն ի սմբակէն վարելոյ. և Եզինն՝ ձմերանի ընդ ալուց կողմն նստելոյ. և մօտ ի գարունն ընդ դրաց կողմն դառնալոյ. և ծիծռան՝ յառաջ քան զաշունն ի ջերին տեղիս ի ձմերոց երթալոյ. և խորդոյն՝ իմանալ յառաջագոյն զձմերունս կարևորս, և վաղ ի մարմանդ տեղիս փութալոյ. և ճայից՝ վաղագոյն տարմատարմ շրջելոյ. և աղաւնեաց՝ համագունդ երամ երամ խաղալոյ, և ագռաւուց՝ ի ծմակաց վաղագոյն ի ջերին տեղիս գնալոյ, և անգեղց՝ ի հեռաստանէ զգիշոյ անկանելոյ դիտաւորութեանս:

Մեր բառով խոսելով՝ այս բոլորի իմաստը հետեյալն է.

«Անասունների մեջ կա բնագոյը, որով նրանք իմանում են լինելիք բաները, այսպես ձին... եզը ձմեռ ժամանակ գոմի խորքն է նստում և գարնան մօտ դառն կողմն է դառնում. ծիծռանկը աշունից առաջ տաքուկ տեղեր ձմեռանոց է գնում. կռուկը առաջուց իմանում է թե խիստ ձմեռ է լինելու և շուտով մարմանդ տեղեր է շտապում. ճայերը ավելի վաղ խմբերով շրջում են և աղափսիները երամ երամ գնում են, ագռափսերը առաջուց ծմակներից տաքուկ տեղեր են գնում և անգղներն էլ հեռվից դիակի անկումը նկատում են»:

Մնում է միայն բացատրել «ի սմբակէն վարելոյ», որ դժվար է հասկացվում:

Վարել բայը երկու իմաստ ունի. 1. հողը կամ արտը վարել, հերկել, 2. ձին, քշել, որից «ձիավար, ձիավարել, ձիավարութիւն»: Քանի որ խոսքը ձիու մասին է և ձին չի կարող հող մշակել, ուստի պետք է առնել երկրորդ իմաստով: Վարելոյ կարող է լինել կամ վարեալ դերբայի (ածականի) և կամ վարել անորոշի սեռական-տրական ձևը, երկուսն էլ որոշ իմաստ չեն տալիս, ուստի և հարմար չեն տեղին: Մնում է մի երրորդ ձև, որ է վարիմ = վարիլ կրավորականը: Շատ հարմար է ուրեմն հասկանալ թե «ձին էլ սրմբակից (քոր գալուց կամ մարմաջից) բնագոյով իմանում է, որ պիտի վարվի, քշվի, վրան պիտի հեծնեն և քշեն»:

58. Ք Ո Յ Ր, Ս Ե Ռ. Ք Ե Ռ

Հայտնի է, որ քոյր բառը ծագում է հնգեր. swesor ձևից և սեռ. քեռ ծագում է նրա սեռ. swesrōs ձևից:

Բայց հյ. սեռ. քեռ շատ նման լինելով քեռի բառին, կարող էր երբեմն շփոթվել նրա հետ: Այսպես, օրինակ, քեռորդի բառը, որ նշանակում է «քրոջ որդի», այժմ էլ ոմանք սխալմամբ հասկանում են «քեռու որդի»:

Այս շփոթութեան առաջը առնելու համար ահա, միջին հայերենում ստեղծվեց քուեր ձևը և նրանից ձևացավ անմիջապես քուերորդի կամ քվերորդի «քրոջ որդի» բառը, որով «քեռու որդի» իմաստի հետ շփոթելու վտանգը վերացավ:

Թե որտեղից առաջացավ այս քվեր ձևը՝ բավական հեշտ է գուշակել: Բ՝ բաղաձայնով վերջացող մի խումբ բառերի սեռականը կազմվում էր Ե հոլովումով (ոսկր-ոսկեր, տարբ-տարեր) և հառկապես տայգր-տայգեր, որ ազգականական բառ լինելով՝ նման էր քոյր բառին:

* Այս հատվածի բացատրության համար տես նաև Վարադ Առաքելյանի «Գրարարի հատընտիր» տպ. Երևան, 1946 թ., էջ 83, ծան. 3:

Ավելի ուշ բառը կապիկց մայր բառի հոլովման և դարձավ միջին հայերենում մի կողմից քվօր և մյուս կողմից քօր: Առաջին քվօր ձևը կենդանի է այժմ էլ Երևանի բարբառում և նրա նման են հոլովվում՝

կեսուր, կեսօր
աներ, հանօր, հանօրադա
բնկեր, բնկօր, հրնկօր:

Վերջին շրջանում քոյր հեռանում է նաև մայր և հայր բառերի հոլովումից և անցնում է կիմ բառի հոլովման, որով ստանում ենք քոյր, սեռ. քրոօ, ինչպես ունենք կեսրոջ, ամերոջ, մերոջ, տագրոջ, ընկերոջ:

59. Ք Ե Ռ Ի

Հնդեվրոպական բնաանիքի կազմակերպությունը այնպես էր, որ ամուսինը կնոջ կողմի ազգականների հետ կապ չուներ, ուստի նրանց համար անուններ չկային: Այսպես, թեև ամուսնու հայրը, մայրը, եղբայրը և քույրը որոշ անուններով կոչվում էին սկեսրայր, սկեսուր, տայր, տալ, սակայն կնոջ հայրը, մայրը, քույրը և եղբայրը հնդեվրոպացուց ժամանակ առանձին կոչում չունեին: Ավելի ուշ, երբ բնաանական կազմակերպության այս ձևը փոխվեց, երևան եկան այն ժամանակ նոր անուններ, ինչպես աներ, զորանչ, և նմաններ, որոնց ծագումը ծանոթ չէ:

Նորակերտ անունների կարգին են պատկանում քենի (որ տես Արմ. բառ.) և քեռի: Քեռի բառը, որի հոմանիշն է մօրեղբայր, գործածված է արդեն և դարի կեսից առաջ գտնված շրջանում մի անգամ (Վեա. ի. 20): Մօրեղբայր ձևը բնավ չէ գործածված հին մատենագրության մեջ. բայց դա պատահական է, որովհետև գործածված կա նրանից կազմված մօրեղբորորդի բառը:

Քենի բառի ծագումը համարված է անհայտ և այսպես էլ նշանակված է Արմ. բառ. 2, էջ 1447:

Սակայն ամեն ոք էլ կարող է զգալ, թե այս բառը պատկանում է քոյր բառին, և հատկապես նրա սեռ. քեռ ձևին:

Թեև ՆՀԹ ոչինչ մեկնություն չի տալիս, բայց նրանից առաջ Ավետիքյան, Գերակ. 1813, էջ 224 կցում է սեռ. քեռ ձևին, նույնը կրկնում է Էմին, Պերակ., էջ 40: Hübisch. ZDMG 35 (1881), 656 և Arm. St. § 294 կասկածով դնում է քոյր բառի քեռ սեռականից, համեմատելով հայ. swiri «մօրեղբոր կամ մոտաքրոջ որդի» բառի հետ: Իսկ Arm. Gr., էջ 504 իմաստի տարբերության պատճառով մերժում է:

Արմ. բառարանիս մեջ ես էլ բառիս ծագումը գրել եմ անստույգ: Այժմ սակայն մտածում եմ, որ անհրաժեշտ է կցել քոյր բառի քեռ սեռականին: Հին սլավոնական ձևին կցել անշուշտ անաեղի է, որովհետև բառը հնդեվրոպական շրջանում գոյություն չունի: Բայց երբ հայերը կազմեցին այս բառը, անշուշտ իրենց ունեցած արմատներից մեկի հետ պիտի կցեին: Մենք զգալով հանդերձ, որ «քույր» և «մօրեղբայր» հարակից գաղափարներ են, գծվարանում ենք ոչ թե բառ ձևի, այլ բառ իմաստի կապել այս երկուսը իրար հետ: Բայց երբ մեկնենք «քեռին» իբրև «այն ձևը, որի քույրը խոստովի մայրն է», երկուսի կապը արդեն դառնում է կրկնակի:

Ընդունելով այս բացատրությունը, առաջարկում եմ Արմ. Բառարանում քեռի բառի մոտ գնել-նշանը և հնդեվրոպական կամ քնիկ հայ բառերի թիվը մեկով ավելացնել:

60. ՄԻ ՆՈՐ ԾԱԾԿԱԳԻՐ 1339 ԹՎԻՑ

Լալայանի Վեպուկ ձեռագրաց Վասպուրականի աշխատություն մեջ, էջ 198, կա հետևյալ ծածկագիրը.

ՎՄԷԹԲԻ. ԻԷԲԴԻԵԻԽ:

Լուծում եմ հազարավորների տեղ գնելով միավոր, միավորների տեղ հազարավոր, տասնավորների տեղ հազարավոր և փոխադարձաբար, որով կստանանք

Բիքսէ. աւետարան

Պարզ է, որ առաջին բառի երրորդ տառը պետք է կարդալ ք. ուստի ծածկագրի երրորդ տառը (է) սխալ է տպված. պետք է գնել Ե:

Սրա տակին էլ կա մի գավազանագիր՝ վերածված վերի ձևին.

|| : : : | . ||| | . ||| | . : : | : : ||| : : | : : ||| .

Որովհետև գրիչն է Ծոհանէս, ուստի կարող ենք առաջին բառը կարդալ Ովա(ն)ս. Մնացյալը երեւի սխալ է տպված:

61. Տ Ա Ր Թ

Գավտոսական բառ է, որ գործածական է հետևյալ բարբառներում. Ախալքալաք, Ազրակ, Ապարան, Աստապատ, Բարերդ, Բուլանրխ, Երևան, Լոռի, Սարերդ, Ղարարաղ, Նոր-Քալաղեռ, Նոր-Ջուղա, Շիրակ, Սուրմալու, Վան: Նշանակում է վառելու համար պատրաստված՝ մեծ ու կոշտ ձեով աթար կամ թրիք գոմեշի, կովի կամ եզան (տարթը ձեռքով չեն պատրաստում ինչպես թիթենը, այլ ոտքերով կոխոտելով, բահով կտրատում են և չորացնում, հողով խառն է և հեշտություն մը չի վառվում): Նշանակում է նաև 2. մարմնի վրա կապած հաստ կեղտ (Սարերդ, Վան 3. Կեղտոտ (Նոր-Ջուղա): Հնչվում է տառը (Սերաստիա) և նշանակում է հստած կեղտ (Ջրի տակ, ամանի երեսը, ատամի վրա, ձեռքի երեսին): Սրանից կազմված բառեր են՝ տարբակալել (Երևան, Ղարարաղ) Վեղկեղանքը վրան չորանալ, 2 (Ղարարաղ) Վերքի վրա փոս կապել, երեսը չոր փոս կապել, տարբաղան (Վան) ժաթարի մի տեսակ:

Այս բառը կարող ենք համեմատել հնդեվրոպական բառերի երկու խմբի հետ. առաջին՝ անգլ. dirt, հոլլ. dreet, հնդու. drīta, անգսք. drītan, հնդու. գերմ. driten, ուու. գլո. dristats Վերքը լուծել, մակեդ. օքթօւեի (Հեսիք.) Վեղտոտել, ապականել: Երկրորդ՝ լիթ. derkiu ժապականել, փորը դատարկել, լա. foria Վերքի լուծ, forio Վեղկեղել: Առաջինը (լիթ.) ցույց է տալիս, որ նախորդների մեջ ատամնականը ածական է. երկրորդը (լա.) ցույց է տալիս, որ արմատի նախաձայնն է dli և ոչ dl: Ըստ այսմ ար-

մատր գրվում է dher, աճականով dh(e)rei-d Վեդատոթյուն, կղկղել» (Pokorny 861):

Բայց, թեև այս արմատի իմաստը շատ լավ համապատասխանում է հայերեն տարբ բառի իմաստի հետ, ընդհանրապես նախաձայն տ (t) թույլ չի տալիս այս համեմատությունը, սպասվում է *ղարտ: Ուրեմն պետք է թողնել այս ստուգաբանությունը որպես սխալ և փորձել մի ուրիշը:

Նախաձայնի հետ համաձայն է մի ուրիշ ձև, որ է հնդու. torḍ, անգսք. tord Վեդտա, լետտ. dirstu, dirst Վեդկղել», dirša Վեդտույք», մրգ zurch, zürch Վերիք: Առաջին երկուսը գալիս են հնիւ. dr-to ձևից. արմատը գրվում է der, որի կոկորդականով աճած ձևից է գերմանականը (Pokorny 798): Հնիւ. dr-to ձևը ամբողջապես ծածկում է հյ. ձևը, բացի բառավերջի ք-ից, որ պետք է լիներ *տարդ (հնիւ. t տալիս է ք-ից հետո հյ. դ):

Բայց տարբ լինելով գավառական բառ, ուր ք-ից հետո դ գառնում է ք, ամեն իրավունք ունենք ասելու, որ տարբ պետք է գրել *տարդ:

Միայն երկու բարբառ կա, ուր ք-ից հետո դ պահվում է անփոփոխ. դրանք են Ագուլիս և Մեղրի: Իժրախտարար այս երկու բարբառներում էլ տարբ բառը պահված չէ, որովհետև փայտի առատությամբ պատճառով աղբը իրրե վառելանյութ չի գործածվել:¹

62. Թ Ր Ք. tantun

Այս բառը գործածական է միայն թրք. ժողովրդական լեզվի մեջ tantuna. dūsmek Վանդուդի մեջ ընկնել» դարձվածքում. ասվում է օրինակ dūsdūn-mi tantuna? Վանդուդի անդուդը: Ոչ մի բառարանում չգտա. ոչ Ապրիլյանի մոտ, ոչ Ջեքի Կարապետյանի մոտ, ոչ Bianchi- մոտ, ոչ By-դաճՈՅ-ի մոտ և ոչ էլ նույնիսկ Հյուսիսի Քաղիմ Քաղրիի մեծ բառարանում (Պոլիս, 1927—1928 թթ.):

Ենթադրում եմ, որ փոխառեալ է հյ. հոմանիշ անդունդ բառից, որ միայն գրաբար չէ, այլ գործածական է բազմաթիվ հայ բարբառներում (տե՛ս Արմ. Բառ.): Թուրքերենը բառավերջի դ ձայնը հնչել է ք, ինչպես է մեր մեջ և փոխադրելով բառի սկիզբը, կազմել է մի տեսակ կրկնավոր, ինչ որ սիրելի ձև է ժողովրդական լեզվի մեջ:

63. Թ Ր Ք. bürüm hürüm

Նույնպես ժողովրդական լեզվի մեջ սովորական բառ է թե՛ թուրքերեն, թե՛ հայերեն և նշանակում է Վեդտույք, անուշ հոտ արձակելով. օրինակ՝ bürüm bürüm qoqlarə čəqəyor=բիւրիւմ բիւրիւմ հոտը կելլա կոր (անուշ անուշ հոտը փչում է): Թեև ընդհանրապես անուշ հոտի համար է ասվում, բայց ծաղրաբար կարելի է գործածել նաև վատ հոտի համար:

Այս բառն էլ նախորդ հոգվածում հիշված բոլոր բառարաններում չգտա, թեև Պոլսում շատ սովորական գործածություն ունի: Ենթադրում եմ, որ փոխառյալ է հյ. բուրում Վեդտույք, անուշ հոտ» բառից կրկնությամբ:

¹ Ինչպես պրոֆ. է. Աղայանը ինձ հայտնեց, Մեղրիում կա տարտ Վեդտա, որ չփոխել թե նույն բառն է:

64. Ս Ր Ի Կ Ա Յ

Երեք տարի առաջ, ընկ. Գևորգ Ջահուկյանը առաջարկել էր ինձ մեկնել այս բառը իբր ասորերեն, որովհետև վերջավորվում է -այ և շատ նման է արար. ܣܪܝܩ sārīq «գող» բառին:

Այն ժամանակ ես չգտա ասորերեն համապատասխան բառը:

Արդարև հայերենում այն բառերը, որոնք վերջավորվում են -այ, ընդհանրապես ասորական փոխառություն են. ինչպես՝ տղայ, կարսայ, շղրայ, ծնծղայ, շուկայ, քահանայ, սատանայ և այլն:

Brockelmann-ի ասորերեն բառարանում (Berlin 1895), էջ 240-ա գտնում ենք ասոր. ܣܪܩ sraq արմատը spoliavit «կողոպտել» իմաստով, որին համապատասխան էլ գրված է արար. ܣܪܩ sriq «գողանալ»: Այս արմատի տակ հիշված են ասոր sriqa «զուր, ունայն», suraqa «կամավոր աղքատություն», և ուրիշ մի քանի նման բառեր:

Այս բոլորը ես հիշել եմ իմ Արմ. Բառ.-ի մեջ զիրկ=զուրկ (զրկել) արմատի տակ, որ դրել եմ փոխառություն նույն ասորի արմատից:

Այժմ գտնում եմ, որ հիշյալ մեկնությունը սխալ է. «ունայն» իմաստը խարել է ինձ: Ասորերեն sriqa ձևը ամբողջովին ծածկում է հյ. սրիկայ բառը, իսկ նույն ասորի «ունայն, զուրկ» իմաստները, միանալով ասոր. «կողոպտել», արար. ܣܪܩ sriq «գողանալ», ܣܪܩܐ sriqat «գողություն», ܣܪܝܩ sariq «գող» իմաստների հետ, ենթադրել են տալիս ասորի (գավառական) մի բառ sriqa, «գատարկապորտ, գող, ավազակ» իմաստով:

65. Չ Ո Ի Ր Կ, Չ Ր Կ Ե Լ

Ի, ու ձայնավորների սղման պատճառով երբեմն կարելի չի լինում որոշել բառի պարզ արմատը, եթե հնից ավանդված չէ: Օրինակ՝ փրկել բառի արմատը մենք կարող ենք ենթադրել փիրկ, փուրկ, փրիկ կամ փրուկ. բայց սրանցից ոչ մեկը ընդունելի չէ, որովհետև հնից ավանդված չէ: Բառը փոխառյալ է ասորերենից, որ ունի pəraq ձևը: Այսպես է նաև զրկել բայը, որի արմատը կարող է լինել զուրկ կամ զիրկ: Երկուսն էլ ավանդված են և ըստ ՆՀԲ զուրկ ընտիր հայերեն է, զիրկ ուսմական:

Գիտենք նաև, որ հաճախ բայերի սկիզբը դրվում է զ նախդիրը սաստկական կազմելու համար. օր. զանցանել, զառամիլ, զարմանալ, զանցնել և այլն:

Կարող է լինել նաև, որ բայը արմատական ձևով պահված չլինի, այլ միայն զ սաստկականով: Այսպես է գերծանել բայը, որի արմատն է *երծ, որ չի ավանդված և հայտնի է միայն լեզվաբանական ֆոնոլոգիայով (Տես Արմ. Բառ.):

Հյ. զուրկ, զրկել բառն էլ այս կարգից է. համարում եմ զ սաստկականով կազմված՝ ուրկ արմատից, որ ավանդված չէ: Այս ուրկ արմատը համեմատում եմ լտ. urgeo բայի հետ, որի նշանակությունները շատ զանազան են (վարել, քշել, գլորել, ափի վրա քցել, ասեղ խրել, սպառնալ, վտանգել, ճնշել, տանել, կրել, վրան ծանրանալ, ընկճել, չարչարել, տանջել, հոգնեցնել, քաղցից նեղվել, սեղմել, շտապեցնել և այլն):

Այս լատին բառը մասնագետները դնում են հնլս. vreg² արմատից, որի նախածայնը և իմաստները շատ չեն հարմարվում լտ. urgeo բայի հետ, որին միացնում են նույնիսկ ոուս. враз! «թշնամի» բառը: Այսպես Walde,

Lat. etym. Wort. 859, Walde-Pokorny, I 319: Բայց իրենք էլ են կասկածում այս ստուգաբանության վրա և հիշում են հարցականով: Trautmann, էջ 342, նույնիսկ չի հիշում լատին ձևը. հետաքրքիր էր իմանալ Ernout-Meillet-ի առաջարկած ստուգաբանությունը, բայց դժբախտաբար այդ գիրքը ձեռքի տակ չունիմ:

Ըստ իս urgeo բայը անջատելով հնիս. vreg² արմատից, պետք է դնել urg² արմատից, որ գտնում եմ նաև հյ. գ-ուրն բառի մեջ:

Ըստ այսմ պետք է ուղղել Արմ. բառ.-ի մեջ իմ հիշած ստուգաբանությունը:

Ինչպես գերծ, նույնպես և զուրկ՝ բայարմատի ձևով պարզ ածականներ են. իսկ զիրկ, ինչպես և հիճն սխալ ձևեր են (փիս. զուրկ, հուճն):

66. Ա Մ Ո Ւ Ր Ի

Նշանակում է չչամուսնացած մարդ, որ կին չունի: Այս իմաստից իսկույն հետևում է, որ բառը պետք է լինի կազմված ան բացասական մասնիկով, որի և ձայնը հաջորդ մ-ի մոտ ջնջվել է: Այսպես բացատրել են արդեն Lagarde, Եազըճեան, Հիւնքեարպէյէնտեան և Ղափանցյան (ՅՅՕ 23, 360), բայց բոլորն էլ դժվարացել են գտնել արմատը: Ըստ իս նախ բառը պետք է համարել ան-մոյրի ձևից, որի արմատն է *մոյրի և պետք է նշանակի լիկնա:

Այս *մոյրի ձևը լիկն կամ աղջիկ՝ նշանակությամբ, հնդեվրոպական բառ է, որ գտնում ենք զանազան լեզուների մեջ: Այսպես սանս. marya—սերիտասարդ մարդ, սիրական, հովատակա, maryaka—ամարդուկ, յն. μείραξ սաղջիկ, հետնարար նաև տղա μείραχιον ստղա, մանչ, կրետ. Βριτο-μαρτις Վրտեմիս աստվածուհին, լատ. marītus չամուսնացյալ մարդ, կին առած (հետնարար նաև marīta չամուսնացյալ կին, մարդու գնացած, արամբի), լիթ marti հարս, նորահարս, merga սաղջիկ, լետտ. marscha լեզրոր կինը, հպրուս. martin հարս, mergo, mergu սաղջիկ, աղախին, գոթ (խրիմի) marzus հարսանիք, կիմր. merch զուստր, morwyn սաղջիկ, mor-forwyn ձուլային հուշկապարիկ, կորն. moroin սաղջիկ, կույս, myrgh սաղջիկ, կին, բրլտ. merc'h զուստր, հիոլ. mair-moru ձուլային հուշկապարիկ: Բոլորի նախաձևն է հնիս. mério—, լատինը՝ հնիս m^ori—ձևից, որից նաև հյ. մարի լեզ թռչուն, հալ, իսկ գերմանական և բալթյան ճյուղի մեջ g, t ածականով (Walde-Pokorny 2, 281, Walde 465, Boisacq 621, Trautmann 170): Այսպիսով *մոյրի և մարի լինում են հայերենում ձայնդարձի ձևեր:

Այս բոլորը տես Արմ. բառ. մարի բառի տակ:

67. Յ Լ Ե Պ

Ժողովրդական բառ է, որ գտնում ենք Ղարաբաղի (ցլեփ) Մեղրու (ցլեպ) և Շուլալերի (ծլեպ) բարբառներում: Նշանակում է նախ փայտի մանր կտորներ, որ իբր կպչան են գործածում. 2 փոխաբերաբար թապակու փշրանք. տե՛ս Գլոս. բառ. 1055ր:

Համեմատում եմ ասոր. سلبا šliba թխաչ՝ բառի հետ Brockelmann, Lex, syr. 1895, 303ր, որի հետ նույն են արար. سلب šalīb թխաչ և սրա-նից փոխառյալ պրս. جلبا čelipa թխաչ՝ բառերի հետ:

Ջանազան լեզուների մեջ խաչ նշանակությունը ծագում է նախորդ փայտն նշանակությունից: Այսպես հուն. σταυρος *ստավոս* 2. մահապարտի ցից. 3. խաչ, σχόλοφ *սուրածայր փայտ, ցից, հետնաբար խաչ, պրս.* *دارو* *daru* *սծառ, փայտ, մանրժելական գրվածներում խաչ, որից է* *مدار* *ḡdar* *ba-dar kardan* *խաչել, ասոր.* *قايسا* *qaysa* *սծառ, փայտ, խաչ, գոթ.* *galga*, *հանգլ.* *gealga* *և հնդու.* *galgi* *սկախաղան, խաչ=արևմտ. հնդու.* *gelgja* *սկոնդ, գերան, հանգլ.* *rod* *խաչ=անգլ.* *rod* *սճպոտ, գալազան, արևմտ. հնդու.* *roḡa* *խաչ և սճոդ:* *նաև հյ.* *խոչ, խէչ փայտ, որ ապա դարձավ խաչ (տե՛ս Արմ. բառ. և Հալեի. 142):*

Այսպես և ենթադրում եմ, որ ասոր. *šlibā* *խաչ* բառն էլ նախապես նշանակել է փայտ, որ ապա կորել է և մնացել է միայն հայ բարբառների մեջ (*հայացած արամայեցիների միջոցով*):